

ՓՈՒՆԸՄԲՈՒՆԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Փոխըմբռնման սույն հուշագիրը կնքվում է «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպության, Լոռու մարզպետարանի, Վանաձորի, Ալավերդու, Սպիտակի, Ախթալայի, Ստեփանավանի, Շամլուղի, Տաշիրի, Թումանյանի քաղաքապետարանների, Օձունի, Մեծավանի, Աքորու և Շնողի գյուղապետարանների (այսուհետ՝ Կողմերի) միջև, «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում համատեղ աշխատանքներ կատարելու վերաբերյալ:

Փոխըմբռնման հուշագրի նպատակն է՝ ապահովել համագործակցության պայմաններ և օժանդակել կողմերի միջև գործակցության սերտացմանը, որը կնպաստի Լոռու մարզում կանանց սոցիալ-տնտեսական զարգացմանը և տնտեսական մասնակցության խթանմանը:

Փոխըմբռնման սույն հուշագիրը կնքվում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի կողմից: Ծրագրի գործընկերներն են CISP կազմակերպությունը, ՀՀ Լոռու մարզպետարանը և Վանաձորի քաղաքապետարանը:

«Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի նպատակն է՝ խթանել Լոռու մարզի կանանց սոցիալ-տնտեսական կարողությունների զարգացումը՝ այսպիսով նպաստելով կանանց իրավիճակի բարելավմանը:

Կողմերի փոխադարձ շահագրգռվածությունը.

- գործելով իրենց լիազորությունների շրջանակներում,
- հիմք ընդունելով կողմերի միջև առկա արդյունավետ համագործակցային հարաբերությունները և դրանք իրավաբանորեն ամրագրելու անհրաժեշտությունը,
- ելնելով Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի կողմից իրականացվող «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի նպատակից և խնդիրներից,

Հաշվի առնելով, որ.

- տեղական/համայնքային մակարդակներում կանանց մասնակցության խնդիրը հանդիսանում է ինչպես ՀՀ իշխանությունների, այնպես էլ քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների հոգածության առարկա,
- կանանց տնտեսական մասնակցության խթանումը կարևոր է Լոռու մարզում տնտեսական զարգացումն ապահովելու տեսանկյունից,
- Կողմերը շահագրգիռ են կանանց սոցիալ-տնտեսական հզորացման ուղղությամբ իրենց գործունեության ընդլայնման, կանանց տնտեսական մասնակցությունը խթանող միջավայրի ստեղծման, ոլորտում հանրային երկխոսության խթանման, համապարփակ հայեցակարգերի, քաղաքականությունների և գործառույթների մշակման և իրականացման համար,
- Կողմերը պատրաստակամ են համագործակցել կանանց սոցիալ-տնտեսական հզորացմանն ուղղված քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով,

Կողմերն ամրագրում են համագործակցության իրենց պատրաստակամությունը՝ հետևյալ հարցերի շուրջ.

1. Կողմերը պարբերաբար միմյանց տեղեկացնում են և իրար հետ խորհրդակցում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ:
2. Կողմերը սահմանված պարբերականությամբ (առնվազն երեք ամիսը մեկ) անցկացնում են հանդիպումներ՝ քննարկելով համատեղ իրականացվող գործողությունների կատարման ընթացքը և ծրագրավորելով հետագա գործողությունները:
3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է մյուս կողմին հրավիրել մասնակցելու իր կողմից կազմակերպվող միջոցառումների, որոնք կարող են հետաքրքրել մյուս կողմ(եր)ին:
4. Կողմերը տարվա վերջում կարող են հանդես գալ տարեկան հաշվետվություններով, գրավոր և/կամ բանավոր ձևաչափերով՝ նպատակ ունենալով ներկայացնել կատարված աշխատանքները, ձեռքբերումներն ու հաջողությունները համագործակցության շրջանակներում:
5. Կողմերը կարող են հանդես գալ նոր նախաձեռնություններով, առաջարկություններով, համատեղ մշակել նոր նախագծեր, ծրագրեր, միջոցառումներ, որոնք կնպաստեն Լոռու մարզում կանանց սոցիալ-տնտեսական հզորացմանը, կարող են փոխանակվել տեղեկատվությամբ, տվյալներով և հրատարակություններով:
6. Կողմերը համագործակցում են Լոռու մարզի տարբեր համայնքներում ՀԵԿԱ-ի կողմից հիմնված, ինչպես նաև այլ Կանանց խորհուրդների հետ:
7. Կողմերի նախաձեռնությամբ և համաձայնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ ու լրացումներ:
8. Հուշագրի մեկնաբանության և կիրառման ընթացքում ծագած տարաձայնությունները Կողմերը լուծում են բանակցությունների ու քննարկումների միջոցով:

Սույն հուշագիրը կնքվեց Վանաձոր քաղաքում, 2013թ. օգոստոսի 2-ին, առանց ժամկետի, հայերեն լեզվով:


Հուշագիրը բաղկացած է իրավաբանական ուժ ունեցող 14 հավասարազոր օրինակներից: Մեկական օրինակներ հանձնվում են ստորագրող կողմերին:

Փոխըմբռնման և համաձայնության սույն հուշագիրը բաց է, և նրան կարող են միանալ Լոռու մարզի այլ համայնքներ, կառույցներ և կազմակերպություններ: Հուշագրին հետագայում միացած համայնքներին, կառույցներին և կազմակերպություններին կտրամադրվեն սույն հուշագրի կրկնօրինակներ՝ ավելացված ստորագրություններով:

Փոխըմբռնման հուշագիրը ստորագրեցին՝

«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա»
հասարակական կազմակերպություն


Նախագահ՝



Լիլիթ Ասատրյան

Լոռու մարզպետարան

Մարզպետ՝



Արթուր Նալբանդյան

Վանաձորի քաղաքապետարան՝

Քաղաքապետ՝



Սամվել Ղարբինյան